

Մամուլի հաղորդագրություն

9. 03. 2020 թ.

Մեծահասակների կրթությունը ՔՈԱՖ ՍՄԱՐԹ կենտրոնում

Գերմանիայի ժողովրդական բարձրագույն դպրոցների միության հայաստանյան մասնաճյուղը՝ **Դի-Վի-Վի Ինթերնեյշնալը**, և «Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամը (**ՔՈԱՖ**) մեծահասակների կրթության ծրագրի իրագործման հուշագիր ստորագրեցին:

[Դի-Վի-Վի Ինթերնեյշնալը ՔՈԱՖ-ին](#) տրամադրում է մասնագիտական և ֆինանսական աջակցություն, որ առանձնացրել է Գերմանիայի Դաշնային Հանրապետության տնտեսական համագործակցության և զարգացման նախարարությունը:

«Մեզ համար շատ կարևոր է ՔՈԱՖ-ի հետ աշխատել, քանի որ այն գյուղի շահառուներին մոտ կանգնած կազմակերպություն է, ու մենք վստահ ենք, որ տրված աջակցությունը ծառայելու է նպատակին», - ասաց «Դի-Վի-Վի Ինթերնեյշնալ» հայաստանյան գրասենյակի տնօրեն **Էսթեր Հակոբյանը**:

Ոչ ֆորմալ կրթությունը խթանում է մեծահասակների մասնակցությունը մշակութային, սոցիալական և տնտեսական գործընթացներին, ինչպես նաև կայուն զարգացմանն ու աղքատության նվազեցման գործընթացներին: Գործընկերության եռամյա ծրագրի խթան է հանդիսացել ՔՈԱՖ ՍՄԱՐԹ կենտրոնի կարևոր դերը մեծահասակների կրթության և քաղաքացիական հասարակության զարգացման գործում:

«Մեծահասակների կրթությունը ՔՈԱՖ ՍՄԱՐԹ կենտրոնում» խորագրով ծրագիրը ներառում է Լոռու մարզի ՔՈԱՖ ՍՄԱՐԹ կենտրոնում մեծահասակների կրթության նախաձեռնություններ, տարաբնույթ դասընթացներ և աշխատաժողովներ, մասնագիտական խորհրդատվություն, համայնքային նախաձեռնություններ և այլն:

«ՔՈԱՖ-ի անունն իսկ երեխայակենտրոն ծրագրեր է ենթադրում, սակայն մեր առաքելությունը գյուղական համայնքների համապարփակ զարգացումը խթանելն է: Դի-Վի-Վի Ինթերնեյշնալի հետ մեր համագործակցությամբ մենք ցույց ենք տալիս Հայաստանի ժողովրդին, մեր համայնքներին ու դոնորներին, որ ամենայն լրջությամբ աշխատում ենք նաև մեծահասակների կրթության ու ինքնիրացման ուղղությամբ», - նշեց «Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամի գործադիր տնօրեն **Կորյուն Խաչատրյանը**:



«Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամ
“Children of Armenia” Charitable Fund

Մասնագիտական վերապատրաստումները նախատեսված են 120 հոգու համար, ու նրանց թիվն ավելանալու է առցանց և աջակցող լրացուցիչ հնարավորություններ տրամադրելու շնորհիվ: Դրական ծնողավարության, առողջ ապրելակերպի և այլ թեմաներով դասընթացների և աշխատաժողովների կարող են մասնակցել շուրջ 200 մեծահասակներ:

ՔՈԱՖ-ի տնօրենն ընդգծեց հատկապես Դի-Վի-Վի Ինթերնեյշնալի պես հեղինակավոր միջազգային ընկերության հետ աշխատանքը, որ բնութագրվում է հարուստ փորձառությամբ, բժախնդրությամբ ու որակական լրջագույն պահանջներով և վերահսկման մեխանիզմներով:

Դի-Վի-Վի Ինթերնեյշնալի և ՔՈԱՖ-ի համագործակցությունը մեկնարկել է դեռ անցյալ տարի ու շարունակվելու է նաև 2021-ին՝ մեծահասակների կրթության ոլորտում ներդնելով ընդհանուր առմամբ շուրջ հիսուն հազար եվրո: Գործընկերները վստահ են, որ միասին գործելու դեպքում շահառուների համար ավելի մեծ արդյունքներ կարող ենք գրանցել: